ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Կարդալու և գրելու կարողությունների զարգացման առանձնահատկություններն ու հաջորդականությունը

Հետազոտող ուսուցիչներ՝ Կարինե Խարազյան, Ժենիկ Մեսրոպյան

Դպրոց՝ Խ. Աբովյանի անվան հ.2 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Կարդալու կարողությունների ուսուցման առանձնահատկություններն ու հաջորդականությունը……5

Գրելու կարողությունների ուսուցման առանձնահատկություններն ու հաջորդականությունը……11

Եզրակացություն……17

Օգտագործված գրականության ցանկ……18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը անձի որակական հատկանիշ է: Սովորել ցանկանալ և կարողանալը եղել և մնում են որպես կրթության գերխնդիրներ: Դրանց իրականացումը հնարավոր է միայն աշխատանքների ճիշտ պլանավորումով: Կարդալու ցանկություն երեխայի մեջ առաջանում է վաղ մանկությունից: Նա կարող է վերցնել որևէ թուղթ՝ անգամ մաքուր, արտաբերել ինչ-որ հնչյուններ և նմանակելով իր տեսած ու ճանաչած մարդկանց՝ փորձել կարդալ: Դա նրան հաճույք է պատճառում, որովհետև այդպես նա իրեն մեծ է զգում, ամենևին չպատկերացնելով այն դժվարությունները, որոնք դեռ պիտի հաղթահարի կարդալ սովորելու համար:Սակայն այդ ցանկությունը կարողություն է դառնում միայն այն ժամանակ, երբ երեխան ճանաչում է տառերը և կապակցում: Այդ ճանապարհը դժվարին է ու երկարատև և ուսուցչից պահանջում է համբերություն, հետևողականություն, քայլերի հատակ գիտակցում ու պլանավորում:

Կարդալը մտավոր գործունեություն է որը երեխայից պահանջում է նախ և առաջ տեսողական, լսողական և տարածական մտածողությունների զարգացում: Տարրական դպրոցում կարևոր նպատակներից է ձևավորել և դասարանից դասարան զարգացնել երեխաների կարդալու կարողությունը ապա ընթերցած բնագրի շուրջ տարվող մեթոդապես ճիշտ աշխատանքի շնորհիվ ընթերցանությունը դառնում է անձի բազմակողմանի զարգացման միջոց:

Երեխայի խոսքի զարգացումը տարրական դասարաններում մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն է: Խոսքի զարգացման շնորհիվ է տեղի ունենում կրտսեր դպրոցականի սոցիալականացումը, հոգեկան զարգացումը, մտածողության զարգացումը: Խոսքի զարգացման խնդիրներից առավել կարևորվում են երեխաների կապակցված խոսքի զարգացումը, քանի որ կապակցված խոսքը մտավոր գործունեության բարձրագույն ձևն է և դրա զարգացման աստիճանով որոշվում է երեխայի խոսքային և մտավոր զարգացման մակարդակը: Արդի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթացը երեխաների առօրյայի անբաժան մասն են կազմում համակարգիչները, համակարգչային խաղերը, որոնք չեն ուղեկցվում խոսքային հաղորդակցմամբ: Կրտսեր

դպրոցական տարիքի երեխաները մեծ դժվարություններ են ունենում շփման, հաղորդակցման գործընթացում, նրանք հաճախ խոսում են առանց զգացմունքայնության, նրանց մոտ գրեթե բացակայում են գիտական խոսքի մշակույթի նորմերին ու օրինաչափություններին համապատասխան խոսքը։

Սկսելով գրավոր աշխատանքը և տառերի կառուցվածքի ուսումնասիրությունը՝ պետք է նախ աշակերտներին սովորեցնել պահպանել որոշակի տարրական պահանջներ, ճիշտ դնել տետրը ճիշտ բռնել գրիչը, ճշտորեն ներկայացնել տառի ձևը, տետրի տողերի վրա հավասարաչափ տեղադրել տառերը, ճիշտ շարժել գրիչը տողի վրա, բառերը գրելիս պահպանել տառերի կապակցման ձևերը,նախապես որոշել՝ բառը կտեղավորվի՞ տողի վրա, և կատարել համապատասխան քայլեր։

Նպատակները

Ուսումնասիրել տարրական դասարաններում աշակերտների կարդալու և գրելու կարողությունների առանձնահատկությունները, որոշել դրանց ուսուցման հաջորդականությունը։

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը:

Աշխատանքը կազմված է ներածությունից, հիմնական բովանդակությունից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից։

Ուսումնասիրության հիմնական խնդիրներն են.

1. Ուսումնասիրել գրականությունը վերը նշված թեմայի վերաբերյալ
2. սահմանել առավել նպատակահարմար մեթոդները և աշխատանքի եղանակները, որոնք նպաստում են արագության, գիտակցվածության և արտահայտիչ ընթերցանության զարգացմանը.

ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հասարակությունն այսօր անչափ բարդ առաքելություն է դրել դպրոցի և ուսուցչի առջև։ Դպրոցում լավագույն կրթության կարելի է հասնել միայն ուսուցչի ակտիվ մասնակցությամբ և այդ գործընթացում ուսուցչի ակտիվ և նպատակային գործունեությունը շատ արժեքավոր է և նշանակալից։

Ընթերցանությունը գրագիտության հիմքն է, ինչը ժամանակակից լիարժեք անձնավորության ձևավորման պարտադիր պայման է։ Այս ուղղությունը ծառայում է նրան, որ սովորողը տիրապետի և կիրառի կարդալու հիմնական մարտավարությունները։

Մտածողությանը զուգընթաց աստիճանաբար զարգանում է համահունչ խոսքը։ Սկզբում խոսքը ձևավորվում է մեծահասակների հետ անմիջական հուզական շփման արդյունքում՝ հիմք դնելով ապագա համահունչ խոսքի համար։ Երբ երեխան մեծանում է, գործունեությունը բարդանում է, փոխվում են սիրելիների հետ շփման ձևերը։ Աստիճանաբար շփումների շրջանակն ընդլայնվում է, և առանձին մենախոսական բառերը, արտահայտությունները, նախադասությունները վերածվում են երկխոսական խոսքի։ Կյանքի երկրորդ տարվա վերջում բառերը սկսում են ձևավորվել քերականորեն։ Երեք տարեկանում ակտիվ խոսքը արագ զարգանում է, բառապաշարը հարստանում է, նախադասությունների կառուցվածքը բարդանում է, խոսքը հասկացվում է։ Խոսքի ըմբռնումը առաջնային նշանակություն ունի երեխայի զարգացման մեջ՝ հանդիսանալով հաղորդակցման ֆունկցիայի զարգացման սկզբնական փուլը։

Կարդալու կարողությունը ներառում է խոսքային միավորի տեսողական պատկերի՝ բառ, բառակապակցություն, նախադասություն և նրա լսողական կառույցի հարաբերակցությունը։ Այդ գործընթացի միասնությունը պահպանվում է կարդալու բոլոր տեսակների ժամանակ՝ անկախ նրանից ընթերցանությունը բարձրաձայն է, թե մտքում։ Որքան ցածր մակարդակում է գտնվում սովորողի կարդալու կարողությունը, այնքան պետք է մեծ տեղ տալ բարձրաձայն ընթերցանությանը. բարձրաձայն կարդալն օգնում է սկսնակ ընթերցողին իմաստավորել, ճանաչել տառային սիմվոլները, հմտանալ դրանց

վերարտադրման մեջ: Այս հիմնավորմամբ էլ երեխաներին պետք է սովորեցնել բարձրաձայն կարդալ, ապա աստիճանաբար անցնել մտքում կարդալուն՝ որպես տեղեկատվության ձեռքբերման ընկալման և իմաստավորման արդյունավետ միջոցի:

Ինչպես նշում է անգլիացի պոետ Ադիսոնը. ««Ընթերցանությունը մտքի համար նույնն է, ինչ ֆիզիկական վարժությունը՝ մարմնի»:

Ընթերցանությունը գիտելիքների ձեռք բերման, բազմակողմանի զարգացման, բառապաշարի հարստացման հիմնական աղբյուր է: Կարդալու միջոցով հարստանում ու զարգանում են աշակերտների երևակայությունը, հոգեկան ներաշխարհը, խոսքը, ճաշակը: Այն նաև օգնում է մարդուն ուրիշների գործունեության ուսումնասիրման ճանապարհով ճանաչելու կյանքը, հասկանալու նրա խորհուրդները և սովորելու ուրիշի սխալների վրա: Հենց այս է պատճառը, որ մանկավարժներն ու մեթոդիստներն ամեն ինչ անում են սերունդների մեջ ընթերցողական կարողությունների մշակման, ընթերցասիրության դաստիարակության համար: Այս կարևոր խնդրի լուծման ճանապարհին հիմնականը կարդալու հմտությունների զարգացումն է: Դրա շնորհիվ աշակերտը հաղորդակից է դառնում մայրենի լեզվի հարստություններին և ձեռք բերում գրքերի աշխարհը թափանցելու բանալին:

Նախ նշենք կարևոր մի գործոն. երեխաները դպրոց են հաճախում պատրաստվածության տարբեր մակարդակներով և ուսման ընթացքում հաջողության են հասնում տարբեր արագությամբ: Դրա համար նախ ուսուցիչը պետք է պարզի, թե ինչ գիտի և ինչի կարիք ունի աշակերտներից յուրաքանչյուրը:

Եթե երեխաները մեծանում են այնպիսի միջավայրում, որտեղ կարդում ու գրում են, ապա նրանք այդ մասին բավականաչափ իրազեկված են՝ դեռ դպրոց հաճախելուց տարիներ առաջ: Այդ աշակերտները սկսում են սովորել սեփական նախաձեռնությամբ ու ուժերով:

Նրանք ցուցաբերում են լեզվական անհրաժեշտ գիտելիքների մեջ խորանալու զարմանալի ունակություն, բացահայտում են իրենց համար լեզվական կառուցվածքների իմաստը, սովորում են կիրառել դրանք՝աստիճանաբար բարձրացնելով իրենց հմտության մակարդակը:

Եթե մեծահասակները երեխաներին շրջապատում են գրքերով, կարդում են նրանց համար, ապա ինքնաբերաբար հնարավորություն են ստեղծում , որ երեխաները միանգամից անցնեն ընթերցանության փուլը և ոգևորությամբ հաղթահարեն այն։

Իսկ այդպիսի հնարավորությունից զուրկ երեխաների համար լուրջ աշխատանք պետք է տարվի թե՛ մանկապարտեզներում, թե՛ տարրական դասարանում, որպեսզի այդ փոքրիկներին նախապատրաստեն գրելու և կարդալու հաջող մեկնարկի։

Առաջին դասարան ընդունվող երեխաների նախնական գիտելիքներին ծանոթանալը արդյունավետ աշխատանք կազմակերպելու տեսակետից գործնական արժեք ունի։ Աշակերտների գիտելիքների ծավալի ու դպրոց ընդունվելու համար նրանց նախապատրաստված լինելու մակարդակի մասին որոշակի գաղափար կազմելը կօգնի առավել նպատակային և արդյունավետ դարձնել երեխայի հետ տարվող աշխատանքները։

Լիարժեք գրաճանաչ դառնալու համար աշակերտները պետք է տիրապետեն որոշակի լեզվական ու աշխարհաճանաչողական գիտելիքների, տեսականորեն ու գործնականորեն նախապատրաստվեն կարդալու և գրելու մտավոր գործողություններին։։

Լեզվական նախագիտելիքների ուսուցումը անհարժեշտություն է։ Դրան հատուկ ուշադրություն պետք է դարձնել։

Գրաճանաչության ուսուցման ընթացքում համարյա ամեն օր ու ամեն դասի խոսք է գնումնախադասության, բառի, վանկի, միավակն ու բազմավանկ բառերի, տպգիր ու ձեռագիր տառերի մասին։ Գրաճանաչության ուսուցման աշխատանքներում, ինչպեսիր տևողությամբ, այնպես էլ կարևորությամբ հիմնական տեղը գրավում է գրուսուցման կամ այբբենական շրջանը։ Այս շրջանում աշակերտը ճանաչում է բոլոր հնչյունները, համապատասխան տառերը, սովորում է ճիշտ արտասանել դրանք, գրել ու կարդալ։ Այս, իրենց համար չափազանց բարդ ու բազմակողմանի աշխատանքը ամբողջ այբբենական շրջանում նույնը չի մնում։ Ուսուցման տարբեր փուլերում նրա խնդիրները և նպատակները , դրանց շուրջ տարվող աշխատանքները, մեթոդները տարբեր են լինում։

Ուսուցման առաջին փուլում զարգացնում ենք աշակերտների տառերը և վանկերը ճանաչելու, դրանք կապակցելու, բառերը վանկերով ընթերցելու կարողությունները։ Այս փոիլի համար բնորոշ են բառիմեջ հնչյունն առանձնացնելու, տրված հնչյունով,

տառամիացությամբ, վանկերով նոր բառեր կազմելու աշակերտի կարողության ձևավորումը, բառապաշարի հարստացումը։

Ուսուցման երկրորդ փուլում կարևոր է անդրադառնալ կետադրական նշանների կիրառությանը թե՛ բանավոր և թե՛ գրավոր խոսքում։ Ուրպեսզի աշակերտը կարողանա ճիշտ հասկանա կարդացած նյութի իմաստը՝ միաժամանակ պահպանելով կետադրական նշանները և առոգանության կանոնները, անհրաժեշտ է նախադասության ուսուցմանը զուգահեռ առաջարկել ընթերցել և՛ պատմողական, և՛ հարցական, ՛և հրամայական, և՛ բացականչական երանգի նախադասություններ։ Կարդալու կարողության ձևավորումը ընթանում է երեք փուլով՝ վերլուծական, համադրական և ավտոմատացված։

Առաջին՝ վերլուծական շրջանում կարդալու կարողության ձևավորումը տեղի է ունենում երկու եղանակով՝ տառերի ճանաչում և վանկերի ու բառերի մեջ դրանց հնչյունների միավորում։ Ու քանի որ երեխայի մեջ տեղի ունեցող հոգեբանակն այս երկու գործողությունները ըստ ժամանակի չեն համընկնում միմյանց հետ և առանձնահատկություններով էլ տարբերվում են, մեջ օգնության է հասնում վերլուծական շրջանը։

Այս առումով էլ վերլուծական շրջանը բաժանվում է երկու աստիճանի՝ ա) տառերի ճանաչում և դրանց համապատասխան հմչյունների հետ կապակցում կամ սովորած հնչյուն–տառերի զուգորդում, բ) վանկային վերլուծություն և ընթերցում։

Վանկի դերն առանձնապես մեծ է կարդալու ուսուցման գործում։ Հիմնականում դժվարությունը այն է, որ որպես արտասանականմիավոր հեշտ ընկալվող վանկը կարդալու ժամանակ հեշտ չի տարբերակվում, քանի որ չկա վանկիկայուն մոդել, այն խիստ դինամիկ է, և աշակերտը դժվար բառի մեջ ինքնուրույն չի կարող առանձնացնել ու կարդալ։

Երեխան սկզբում սովորում է տառերը, ապա այդ տառերի ապակցությունները՝ նախ վանկերի, ապա բառերի մեջ։ Ուշադրություն պետք է դարձնել այն բանի վրա, որ աշակերտը ընթերցվող բառի մեջ տեսնի բոլոր տառերը, բառը կարդա ամբողջությամբ։

Կարդալու ուսուցմանը զուգահեռ պետք է իրականացվի նաև կարդացածը հասկանալու հատկանիշի ձևավորումը ու զարգացումը։ Այս շրջանում աշակերտը նախ կարդում է գրվածը, ապահասկանում։ Երկրորդ ընթերցումը արվում է հասկանալու նպատակով։

Բառակապակցության ընթերցումն էլ իր առանձնահատկությունը ունի։ Այն թե՛ առանձին վերցված, և թե՛ նախադասության մեջ գիտակցվում է որպես ինքնուրույն կապակցություն, ինչը պետք է արտահայտվի նաև կարդալու եղանակով։ Ընթերցման ժամանակ ձայնի բարձրացումով կամ ցածրացումով այդ կապը պետք է ցայտուն արտահայտել, որպեսզի լսողն այդ երկու բառն ընկալի որպես իրար կապակցված միամբողջություն։

Նախադասության ընթերցումն էլ որոշակի դժվարություն է ներկայացնում։ Դրա մեջ ներառված բառերի փոխկապակցվածությունը երեխաներին հասկանալի դարձնելու նպատակով պետք է կարդալուց հետո դրա վերաբերյալ հարցեր տալ նրանց։

Դժվարություն է ներկայացնում նաև կապակցված բնագրի ընթերցումը։ Այստեղ տառի, վանկի, բառի փոխարեն ընկալման միավորը ամբողջական նախադասությունն է, ու դրա ընկալուն ու միմյանց կապակցումը աշակերտի համար լուրջ խոչընդոտ է ներկայացնում։ Յուրաքանչյուր բնագիր կարդալուց առաջ աշակերտներին պետք է դիտել տալ բնագրին վերաբերվող նկարը, ապա զրույց անցկացնել դրա շուրջը, որպեսզի հնարավոր լինի նրան ներգրավել թեմայի ոլորտի շուրջ, վարժեցնել բնագրի ընթերցմանը և սովորեցնել գեղեցիկ ու կանոնավոր կարդալ։

Առաջին դասարանի վերջում և երկրորդ դասարանի սկզբում աշակերտների մեծ մասը բավականաչափ փորձ է ձեռք բերում բառերը կարդալու և հետևելու,որ ընթերցանությունը դառնա առավել սահուն ու ճիշտ։ Այն երեխաների համար, ովքեր վաղ մանկական տարիքում շատ են լսել մեծերի կողմից ընթերցված ստեղծագործություններ, այս փուլը նրաց համար «պակասը լրացնելու» շրջան է։

Եթե երեխան դժվարություններ է գրանցում ճիշտ կարդալու հարցում, ուրեմն նրա հետ հաճախ պետք է աշխատանք տանել, որպեսզի ճշտորեն, մաքուր արտասանի բառի բոլոր հնչյունները՝ պահպանելով ուղղախոսության կանոնները։ Այս երեխաների հետ հաճախ պետք է անցկացնել տարատեսակ տառախաղեր, վանկախաղեր, բառախաղեր։

Եթե երեխան դժվարություն է գրանցում սահուն կարդալու հարցում, ուրեմն անհրաժեշտ է սովորեցնել նրան տեքստն ընթերցել ամբողջական բառերով, խոսելու տեմպին համահունչ։ Հարկավոր է վարժեցնել, որ երեխան հայացքի մեկ ընկալումով կարողանա ընթերցել ու ընկալել բառակապակցություններն ու նախադասությունները։ Սահուն

ընթերցել նշանակում է հարթ ընթերցում, որը ներառում է արտահայտչականություն և իմաստալից ելևէջներ։

Ուսման հետ կապված բոլոր խորհուրդների վերջնական նպատակն այն է, որ երեխան հասկանա իր կարդացածը։

Փորձը ցույց է տվել, որ աշակերտի կողմից տեքստը չհասկանալու պատճառները տարբեր են։ Եթե երեխան խնդիր ունի սահուն կարդալու հարցում, դա կբերի տեքստը չհասկանալուն։ Սակայն երբեմն երեխան կարդում է սահուն և ճիշտ, բայց դժվարանում է պատասխանել տեքստի շուրջ առաջադրված հարցերին։ Այստեղ առաջ է գալիս բառապաշարի, մտապահման ու եզրահանգման պարագան։ Բանն այն է, որ տեքստում հանդիպած անծանոթ բառերը կարող են հանգեցնել տեքստը չհասկանալուն։ Այսինքն բառապաշարը ըմբռնման կարևոր բաղադրիչ է։

Երբեմն աշակերտները ունենում են մտապահման խնդիր, որը ևս հանգեցնում է տեքստը չհասկանալուն։ Տեքստի հինական գաղափարը պարզել, նշանակում է ամփոփել տեքստը։ Վարժ ընթերցել իմացողները կարողանում են ներկայացնել տեքստի հիմնական գաղափարը՝ բաց թողնելով նվազ կարևոր տեղեկությունները։

Հմուտ ուսուցիչն իր համար պետք է պարզի, թե որն է պատճառը, որ երեխան չի հասկանում իր կարդացածը, ապա աշխատանքներ կատարի դրանք շտկելու ուղղությամբ։ Երբ աշակերտն ավելի հմուտ ընթերցող են դառնում, ուսուցիչը աստիճանաբար վերահսկողությունը փոխանցում է աշակերտներին, որպեսզի նրանք ավելի ինքնուրույն դառնան։

Ինչպես տեսնում ենք, ոչ մի քայլը ուսուցման գործընթացում ինքնանպատակ չէ. յուրաքանչյուր գործողություն հող է նախապատրաստում հաջորդ քայլի համար։ Մինչև ուսուցիչը լավ չտեսնի ամբողջը, չի կարողանա համակցել մասերը։

Լեգոներով ճիշտ պատկեր ստանալու համար երեխային տրվում է ամբողջական պատկերը։ Ուսուցիչն էլ դասը «լեգոներով» է հավաքում։ Եթե երեխան հավաքելիս սխալվում է, այդ սխալ պատկերը անմիջապես աչքի է ընկնում ու այն կարելի է անմիջապես շտկել։ Ի տարբերություն երեխայի ուսուցչի սխալը շտկելու համար կրկին պետք է հետ գնալը, որը ժամանակի զուր վատնում է։

Ուստի ուսուցիչը միշտ պետք է հիշի, որ այսօրվա իմաստալից, ճիշտ և հերթագայությամբ կազմակերպված ուսունական գործունեությունը վաղվա հաջողության նախադուռն է։ «Եթե ուսուցիչը սիրում է իր աշխատանքը, նա լավ ուսուցիչ կլինի։ Եթե ուսուցիչը սիրում էիր աշակերտներին, ապա նա ավելի լավ ուսուցիչ կլինի, քան նա, ով կարդացել է բոլոր գրքերը, բայց չի սիրում իր աշակերտներին։ Եթե ուսուցիչը սիորում է իր աշխատանքը և իր աշակերտներին,նա կլինի կատարյալ ուսուցիչ –ասել է ռուս գրող Լև Տոլստոյը։

ԳՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրելու գործընթացը, որպես մտավոր գործունեություն, շատ ավելի բարդ աշխատանք է, քան կարդալը: Գրավոր խոսքի հմտություններն սկսում են կազմավորվել դեռևս գրաճանաչության նախայբբենական շրջանում և հետագա ուսումնառության ամբողջ ընթացքում շարունակվում են հղկվել ու կատարելագործվել: Այդ գործընթացը երեխաներից պահանջում է մտավոր, ֆիզիկական ունակություններ,հատուկ ճիգերի գործադրում, գրելու տեխնիկական հմտություններ, հուզական կայունություն, կամքի մղում, գրելիքի նյութական բովանդակության մտապահում,գրելուն զուգահեռ ընթացող լուռ ընթերցում, հնչյուններին համապատասխանող տառերի ձևերի պատկերացում, տվյալ տառերը գծող կամ ձևավորող գրամոտորային շարժումների պատկերացում, ինչպես նաև այս բոլոր բաղադրիչների աստիճանական միավորում ու ավտոմատացում: Այդ է պատճառը, որ գրելու գործընթացը կազմակերպելիս ուսուցիչը պետք է հստակ պատկերացնի դրա նպատակն ու խնդիրները, ինչպես նաև հաշվի առնի երեխաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները:

Չափահասը գրում է՝ առանց նկատելու այն ավտոմատացված գործողությունները, որոնք առաջին դասարանցիների մեծ մասը դժվարությամբ է հաղթահարում գրավորի ժամանակ: Պատճառն այն է, որ գրավորի համար անհրաժեշտ շարժողական գործընթացը երեխայից պահանջում է առավել բազմաբնույթ , ինքնուրույն նուրբ ու բարդ գործողություններ՝ նուրբ շարժումների կոորդինացիա, մկանների լարում, նաև երկար ժամանակ նույն դիրքով նստելու կարողություն: Պետք չէ մոռանալ,որ երեխան պետք է հետևի իր նստած դիրքին, տետրի տեղադրման ձևին, հիծի գրվող տառի պատկերը, տողի վրա նրա դիրքը, տառամասնիկները, գրելաձևը, մյուս տառերի հետ կապակցությունը:

Գրավորի հետ կապված բարդությունները առանց երեխային ցավ պատճառելու հաղթահարելու համար առաջին հերթին պիտի հիշել, որ գրավորի շարժողական

գործընթացը ունի որոշակի օրինաչափություններ, որոնց հետ պետք է հաշվի նստել: Գրելու կարողության ձևավորման համար կարևոր է երեխայի մտավոր, ֆիզիկական,հոգևոր և անձնային առանձնահատկությունների հաշվառումը:

Վեց տարեկան երեխաներով համալրված դասարաններում գրելու ուսուցման գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է իմանալ մի շարք առանձնահատկություններ:

Ուսուցչի հիմնական խնդիրն է՝ երեխայի մեջ մշակել սովորելու կարողություն, որից բխում է գրելու սուսուցման գործընթացի սկզբունքային առանձնահատկությունը: Առաջնահերթ նշանակություն պետք է տրվի հետևյալ կարողությունների զարգացմանը.

- Գրելու ընթացքում ուշադրության կենտրոնացում
- Անհրաժեշտ գործողությունների իրականացում՝ ըստ տրված հաջորդականության
- Սեփական գործողությունների պլանավորում, վերահսկում և նկարագրում
- Աշխատանքի կատարման ճշտության ինքնաստուգում և գնահատում

Ուսուցիչը աշակերտների ուշադրությունը պետք է հրավիրի ոչ միայն այն խնդրին, թե ի՛նչ է անհրաժեշտ գրել, այլև՝ ինչպե՛ս գրել: Սա ոչ միայն անսովոր, այլև դժվարին պահանջ է վեց տարեկան երեխայի համար, սակայն գործողությունների հստակ պլանավորումը կնպաստի այդ դժվարության հաղթահարմանը: Կարևոր է նաև, որ երեխաները ուսուցչի հսկողությամբ կարողանան նկարագրել գործողությունների հաջորդականությունը և խստորեն պահպանեն այն: Բավական բարդ գործընթաց է երեխային ինքնավերահսկման կարողության ուսուցումը: Կարևոր է նաև, որ աշակերտները սովորեն քննադատորեն նայել իրենց գրածին, նկատեն նույնիսկ ամենափոքր անճշտությունները:

Գրաճանաչության նախայբբենական շրջանի մի շարք կարևոր խնդիրներից է նաև գրելու նախապատրաստումը: Այդ աշխատանքներն անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որ դպրոցին ամենատարբեր պատրաստվածության մակարդակ ունեցող երեխաները հաջողությամբ յուրացնեն գրելու տեխնիկական հմտությունները: Գրելու ուսուցման հիմնական գործընթացը ենթադրում է նաև ուսումնաշտկողական հետևողական աշխատանք, որն ուղղված է

✓ Երեխայի մատների մանր նրբաշարժումների ամրացմանն ու զարգացմանը

- ✓ Ձեռքի դաստակի մարզմանը
- ✓ Տեսողական հիշողության զարգացմանը
- ✓ Գրելու ժամանակ հիգիենայի կանոնների կարևորության գիտակցմանն ու դրանց պահպանման ունակության մշակմանը
- ✓ Տետրի մեջ կողմնորոշվելու կարողության մշակմանը
- ✓ Ուրվագծերով տրված նկարների գունավորման աշխատանքների կատարմանը՝ առանց եզրագծերն անցնելու
- ✓ Ձախից աջ գրության ապահովմանը
- ✓ Հայերենի հիմնական տառամասնիկները գրելու կարողության մշակմանը:

Ահա այս հիմնական խնդիրները, որոնք պետք է իրականացնել գրաճանաչության նախայբբենական շրջանում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները:Սրանք լուծելու համար վարժությունները պետք է կատարել համբերատար և գրաճանաչության ուսուցման բոլոր փուլերում հիշելով, որ 6-7 տարեկան երեխաների գրելու գործընթացը պիտի տևի 7-0 րոպե, ապա անհրաժեշտ է ընդմիջել, կատարել լարվածությունը թուլացնող վարժություններ, ապա նոր շարունակել: Այս խնդիրների լուծման նպատակով կիրառվում են տարաբնույթ վարժություններ, խաղեր, առաջադրանքներ նկարչությունից,ծեփոնով զբաղվել, ապլիկացիայից և մատների մանր ֆալանգների ամրացման, դաստակի մարզման վարժություններից:

Այդ իսկ պատճառով երեխաներին պետք է առաջարկել գունավորել նախ մեծ,ապա՝ փոքր պատկերներ, մշակել ձեռքի՝ ձախից աջ գնացող շարժումներով գունավորում առանց տետրը շարժելու մեկ ուղղությամբ ներկելու ունակություն, սովորեցնել մատիտը ճիշտ բռնել, նկարչական տետրը սեղանին դնել 45 աստիճան թեքությամբ և պահպանել տետրից աչք ընկած հեռավորությունը: Քանի որ երեխաները գրել են սովորելու ամբողջական տառերով, ապա տառամասնիկներն ուսուցանելիս պետք է նկատի ունենալ, որ այդ գործընթացը լոկ գրելու նախապատրաստում է: Լուծելով վերը նշված խնդիրները՝ ուսուցիչը հնարավորություն ունի այբբենական շրջանում ուսումնական գործընթացն այնպես կառուցել, որ բոլոր երեխաները հաջողակ լինեն՝ առանց նրանց նյարդային համակարգը լարելու:

Գրաճանաչության այբբենական շրջանի հիմնական խնդիրները, որոնք վերաբերում են գրելու ուսուցման գործընթացին, հետևյալն են.

1. Զարգացնել և ամրակայել գրենական պիտույքներից օգտվելու, տետրում կողմնորոշվելու կարողությունները:
2. Շարունակել ամրակայել երեխաների ոսկրամկանային համակարգը:
3. Մշակել տառամասնիկներն ամբողջական ընկալելու և դրանք տետրում տրված օրինակի համաձայն վերարտադրելու կարողություններ:
4. Իրականացնել վանկերի, բառերի, բառակապակցությունների գրուսուցումը վայելչագրության կանոնների համապատասխան:
5. Մշակել տպագիր տեքստից ձեռագիր վերարտադրելու կարողություն:
6. Սովորեցնել գրել մտքով իրար հետ կապված մի քանի նախադասություն և գրածի իմաստը հասկանալու կարողություն:
7. Մշակել գրության և արտասանության տարբերություն չունեցող բառերն արտագրելու և թելադրությամբ գրելու կարողություն:
8. Սովորեցնել հնչյունատառային վերլուծությունից հետո գրառել բառեր և նախադասություններ:
9. Գրի առնել ինքնուրույն կազմած նախադասությունները (3-4 բառից կազմված):
10. Ինքնաթելադրությամբ գրել փոքրիկ չափածո բնագրեր:

Գրուսուցման աշխատանքները ճիշտ իրականացնելու համար պիտի նկատի ունենալ, որ գրելու գործընթացը ունի 2 կողմ՝ բովանդակային և տեխնիկական:

Բովանդակային կողմը վերաբերում է կատարվող գրավոր աշխատանքի բովանդակությանը, իսկ տեխնիկականը՝ անմիջականաորեն առնչվում է յուրաքանչյուր առանձին վերցրած տառի գրաֆիկական պատկերին և նրա՝ մյուս տառերի հետ ունեցած կապին, բառերի ճիշտ գրությանը և նախադասություններ գրելիս նրանց տեղին: Շատ կարևոր հանգամանք է այն, որ ուսուցիչը աշակերտների գիտակցությանը հասցնի այն ճշմարտությունը, որ գեղեցիկ և գրագետ գրելը և տետրի կոկիկ ու վայելուչ վարումը նպաստում է ինքնատիրապետման, կարգապահության, զսպվածության, կոկիկության, կազմակերպվածության և այլ անձնային որակների ձևավորմանը: Ուսուցիչը, սակայն, իր հերթին պիտի հաշվի առնի, որ գրելը խոսքային գործունեության ամենաբարձր տեսակն է.

երեխայի անհատականության հետ խստորեն կապված գործընթաց է, և որ գրելու կարողությունները ձևավորվում են դանդաղ՝ երեխայից խլելով մտավոր, ֆիզիկական և հոգեկան մեծ ջանքեր:

Երեխայի մեջ պիտի ձևավորել այն հմոզմունքը, որ գեղեցիկ, ընթեռնելի ձեռագիրը իր գրածը ընթերցողի նկատմամբ հարգանքի դրսևորում է, իսկ առաջին դասարանցու գրավորի առաջին ընթերցողը ուսուցիչն է: Ուսուցիչն էլ իր հերթին ցուցաբերի նրբանկատություն և համբերություն երեխաների եռագրի նկատմամբ նկատի ունենալով , որ

- Գրելը առաջին դասարանցու համար մտավոր գործունեության ամենաբարդ տեսակն է
- Գրելու կարողությունը ձևավորվում է դանդաղ՝ երեխայից խլելով մտավոր, ֆիզիկական և հոգևոր ջանքեր

Հարկ է նշել, որ գրուսուցման բոլոր փուլերում պետք է հենվել ուսուցման որոշակի սկզբունքների վրա՝ զննականություն, գիտակցականություն, աստիճանականություն, երեխաների անհատական առանձնահատկությունների հաշվառում, կարդալու և գրելու համատեղ ուսուցում: Չմոռանանք նաև, որ գրաճանաչության շրջանի կարևորագույն խնդիրը երեխաներին հասկանալով, սահուն, արտահայտիչ կարդալ, գիտակցաբար, գրագետ և վայելուչ գրել սովորեցնելն է և տվյալ տարիքի երեխաների ունակություններին համապատասխան բանավոր և գրավոր խոսք կառուցելը:

Ձեռագիր տառերի ուսուցումը պետք է սկսել նրա հնչյունի գիտակցումից: Հայերենի տառերի հիմնական մասնիկները գրել սովորում են նախաայբբենական շրջանում: Ցանկացած տառի գրուսուցումից առաջ ուսուցիչը երեխաներին հետ կատարում է տառապատկերի վերլուծություն: Դա իրականացվում է տարբեր տեսանկյուններով՝

- Տառապատկերի վերլուծություն՝ ըստ երեխաներին ծանոթ մասնիկների
- Տառապատկերի վերլուծություն՝ տառը գրելու ընթացքի՝ հաշվի տակ
- Տառապատկերի վերլուծություն՝ համեմատելովիրենց ծանոթ տառերի հետ

Այսպիսի վերլուծական աշխատանքից հետո ցուցադրվում են ծանոթ մասնիկների միացման եղանակները:

Այսպիսով, երեխաները սկսում են գրել՝ իրականացնելով մի շարք քայլեր՝

ա) **վերլուծական**

- Տառի վերլուծություն՝ առանձինմասնիկների անջատում, դրանց գրելաձևի հասկացում
- Մասնիկներն իրար մացնելու և տառը գրելու ուղղության բացատրություն
- Տողի վրա տառի տեղադրման ձևի ըմբռնում

բ) **համադրական**

տառի մասնիկների համադրումև ամբողջական տառի ստացում

գ)**ավտոմատացված գրություն**

տառի գրուսուցումը միանգամից, սահուն, թեթև, առանց լարվածության գրելու ունակության ձևավորում

Սկզբնական շրջանում երեխայի գրելու ժամանակը բաժանվում է երկու մասի՝

1.երեխայի ձեռքի շարժումը տառամասնիկը գրելիս

2.փոքր դադար՝ հաջորդ շարժումը որոշելու համար

Յս շրջանում, բնականաբար, երեխաները դանդաղ են գրում, և կարիք չկա ծտապեցնելու նրանց: Դանդաղ գրելով երեխան սովորում է ճիշտ, գեղեցիկ գրել:

Գրուսուցման կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ արագ գրելու կարողությունը խիստ անհատական է, և չի կարելի այն պարտադրել բոլորին: Այդ կարողության կատարելագործմանը մեծապես նպաստում են վարժությունները: Կրկնվող վարժությունները նպատակահարմար ու արդյունավետ են այն դեպքում, երբ արդեն ձևավորված են որոշակի հմտություններ, և կարիք ունեն դրանց խորացման:

Բերենք տառի գրուսուցման դասի մեթոդական շղթան

1.Կազմակերպական–բացատրական աշխատանք

2.Բառի հնչյունային վերլուծություն ուսուցանվող նոր հնչյունի առանձնացում բառից

3. Ծանոթություն նորածանոթ հնչյունի ձեռագիր պատկերին, համեմատում դրա տպագրի հետ՝ հայտնաբերելով նմանություններ ու տարբերություններ

4.Նարածանոթ տառերի մասնիկների վերլուծություն

5.Նորածանոթ տառի համեմատում ծանոթ տառերի հետ

6.Տառի պատկերումը գրատախտակին

7.Տառի գրուսուցում օդում

8. Տառի գրուսուցում թելերով, լարերով

9. Տառի գրուսուցում գրատախտակին

10.Մատները գրելուն նախապատրաստող վարժություններ

11. Աշխատանք տետրում

- Տառի գրուսուցում
- Բառի գրուսուցում
- Բառակապակցության գրուսուցում
- Բնագրի գրուսուցում

12. ֆիզկուլտ դադար

Հետայբբենական շրջանում վայելչագրական կանոններին համապատասխան գրելու կարողությունների ձևավորման ուղղությամբ աշխատանքները ևս սկսվում են նախաայբբենական շրջանում և շարունակվում է բուն գրաճանաչության շրջանում։ Այս շրջանի վերջում երեխաները հիմնականում կարողանում են ազատ գրել տառեր, բառեր, նախադասություններ, բնագրեր։

Սակայն հետայբբենական շրջանում աշխատանքներ են տարվում կապակցված գրելու կարողության ձևավորման ուղղությամբ։ Սա գրելու կարևոր մակարդակ է, որն ապահովում է արագ գրելու կարողության ձևավորումը։ Այս փոիլում պիտի մեկ առ մեկ բացատրվի, թե ինչպես են տառերը կապակցվելու։ Հակառակ դեպքում աշակերտները իրենք են զգում տառերն իրար կապակցելու անհրաժեշտությունը, և կապում են դրանք տարերայնորեն ու արդյունքում ձևավորվում է ոչ վայելուչ ձեռագիր։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1.Աշակերտների խոսքի զարգացումը հաջող կազմակերպելու համար անհրաժեշտ է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրություն և գործադրում։

2.Կարդալու կարողությունները զարգացնելու համար անպայման պահպանել վերը նշված հաջորդականությունը և չմոռանալ աշակերտի անհատական ունակությունների մասին։

3. Ուսուցումը պետք է անպայմանորեն կապել կյանքի հետ, որպեսզի երեխաներին մատչելի ու հասկանալի լինի բացատրվելիք նյութը։ Պետք է օրինակները վերցնել երեխայի կենցաղից, շրջապատող իրականությունից։ Ուսուցումը պետք է նաև զուգակցել դաստիարակության հետ, երեխաների մեջ մշակել բարոյական և գեղագիտական նորմեր։

4.Կապակցված գրության համար ուսուցիչը պետք է իմանա հայերեն տառերի տեղադրության մասին կյուրաքանչյուր տառն ուսուցանելիս գործնականորեն սովորեցնի, թե որ տառը ինչպեսէ կապվում իրեն հաջորդող տառի հետ։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կ. Թորոսյան, Հ.Խաչատրյան–Վեց տարեկան դպրոցականների ուսուցումը

2. Վ. Սարգսյան,Կ. Թորոսյան, Հ. Խաչատրյան– Մայրենի–3. «Մանմար», Երևան 2010

3. Վ. Սարգսյան, Կ. Թորոսյան, Հ. Խաչատրյան, Կ. Չիբուխչյան– Մայրենի-4, «Մանմար», Երևան 2011

4. Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուուցման մեթոդիկան երկրորդ դասարանում, «Լույս»,Երևան 2004

5. Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի ուսուցման մեթոդիկա, «Զանգակ», Երևան,2006

6. Գնահատման գործիքներ Հայաստանի դպրոցների տարրական դասարաններում տեղեկացված գրաճանաչության դասավանդման համար

7. «Նախաշավիղ» ամսագիր